



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԹՈՐԴՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

Bishop Torkom Manoogian, Primate

Թիւ 17011  
Փետրուար 28, 1966

Արժանաշնորհ

Տ. Բարգէն Աւագ ԶՀՆՅ. Մագսուտեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
և Նախագահ Մխական Խորհուրդի  
Քէյմպրին.

Սիրելի Տէր Բարգէն,

Ստացած ենք 1967 Փետրուար 21 թուակիր Ձեր տեղիկագիրը, որով կը  
հաղորդէր թէ Ձեր նախագահութեամբ՝ Թունուար 29ին գումարուած Ձեր Մխա-  
կան Ժողովին մէջ կատարուած է Մխական Խորհուրդի վեց անդամոց ընտրու-  
թիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէր ընտրուած  
անձերուն վաւերացման պաշտօնագիրը։

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադ-  
րութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Մխական Խոր-  
հուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տուած ցանկին։

Այս առիթով կը յայտնենք թէ կարգ մը համայնքներ մօտէն չեն Հետիւած  
Թեմական Կանոնադրութեան յօդուածներուն, եւ պակասաւոր տեղեկութիւններ  
դրկած են Առաջնորդարան։ Ուստի, այժմէն կ'ազգարարենք որ յառաջիկային  
կարեւորութեամբ նկատի պիտի առնենք գործադրութիւնը Կանոնադրութեան  
տրամադրութեանց։

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել նորընտիր Դիւանի անդամոց  
անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը։

Օրհնելով Մխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունեութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքին մեր  
սիրեցեալ ժողովուրդին։

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԴՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Տիարք՝ Արշի Խոլլիկեան  
Ուոլթոր Վարդանեան  
Լուի ձանիկեան  
ձան Սուրբուրեան  
Րիչըրտ Կիւլիսսեան  
Տըթ. Հայկ Հապէշեան